ՆԱԽԱԴՊՐՈՑԿՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ՝ «ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՀՈԳԵԲԱՆԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՃՐԸ

Վերապատրաստվող՝ Գեղեցիկ Վարազդատի Հարությունյան

Երևանի հ.139 մսուր-մանկապարտեզ

Վերապատրաստող՝ հ.գ.թ., Լիլիթ Վարդանյան

Երևան 2022

Բովանդակություն

Ներածություն_____3

Գլուխ 1. Նախադպրոցական տարիքին բնորոշ առանձնահատկությունները__4

Գլուխ 2. Նախադպրոցական հաստատություններում հոգեբանի գործունեության ընդհանուր դրույթները, առանձնահատկությունները և բարոյական էթիկան___8

Գլուխ 3. Նախադպրոցական ուսումնական հաստատության հոգեբանի պաշտոնային պարտականությունները, որակավորման պահանջները_____11

Եզրակացություն_____15

Գրականության ցանկ_____16

Ներածություն

Նախադպրոցական հաստատություններում երեխաների հետ տարվող հոգեբանական աշխատանքը չափազանց արդիական է այն առումով, որ այս տարիքում է ձևավորվում երեխաների հուզական ոլորտը, երեխան սովորում է ճանաչել և արտահայտել հույզերը, և եթե դրա հետ կապված խնդիրները ժամանակին չլուծվեն կամ կանխվեն, ինչը հաճախ լրացուցիչ աշխատանք է պահանջում նաև երեխաների ծնողների հետ, հետագայում երեխան հուզական և հոգեկան զանազան խնդիրների առաջ կարող է կանգնել: Այս ամենը այսօր առավել դյուրին է դարձել այնպիսի ծառայությունների միջոցով, ինչպիսին է հոգեբանի աշխատանքը:

Նախադպրոցական հաստատություններում աշխատող հոգեբանը ենթարկվում է այն բոլոր սկզբունքներին և կանոններին, ինչն առկա է հոգեբանության մեջ, մասնավորապես՝ հոգեբանի բարոյական էթիկան, ինչին կանդրադառնանք ներքևում: Նախադպրոցական հաստատություններում հոգեբանի աշխատանքը կազմակերպվում է այնպիսի գիտությունների հենքի վրա, ինչպիսիք են հոգեբանությունը, մանկավարժությունը և սոցիոլոգիան: Այդուհանդերձ, նախադպրոցական հաստատություններում աշխատող հոգեբանին անհրաժեշտ է բացի մասնագիտական գիտելիքներից ունենալ նաև նշված հարակից գիտություններին հատուկ գիտելիքներ:

Տեղին է հիշել այն փաստը, որ գրեթե բոլոր հեղինակավոր հոգեբանական տեսություններում (մասնավորապես՝ հոգեդինամիկ) վաղ մանկական տարիքը համարվում է այն ժամանակահատվածը, երբ ձևավորվում են հոգեկանի հիմնական սկզբունքները և մեխանիզմները, որոնք հետագայում (թերևս կյանքի ամբողջ ընթացքում) ուղեկցում են անհատին և ապահովում հոգեկանի առողջ զարգացումը:

Գլուխ.1. Նախադպրոցական տարիքին բնորոշ առանձնահատկությունները

Նախադպրոցական տարիքը կարևորագույն շրջան է անձի կայացման և բնականոն զարգացման համար, որը մեծապես կախված է երեխայի շրջապատող միջավայրից:

Նախադպրոցական տարիքում փոփոխվում է երեխայի էմոցիոնալ գործընթացի կառուցվածքը: Վաղ տարիքում այն իր մեջ հիմնականում ընդգրկում է վեգետատիվ և շարժողական ռեակցիաները: Վիրավորանք ապրելիս երեխան կարմրում է, շնչառությունը, զարկերակն արագանում են, բղավում, լաց է լինում, զայրույթի պահին անկապ շարժումներ է անում, կարող է ընկնել հատակին, ոտքերով դոփել, ձեռքն ընկած առարկաները կոտրել:

Այս ռեակցիաներն արտահայտվում են նաև նախադպրոցական տարիքում, չնայած որ արտահայտման արտաքին դրսևորումները երեխաների մի մասի մոտ դառնում են առավել հանգիստ և զուսպ:

Բացի վեգետատիվ և շարժողական ռեակցիաներից հուզական գարծընթացներն իրենց մեջ ընդգրկում են նաև ընկալման, պատկերային մտածողության և երևակայության բարձր ձևեր:

Նախադպրոցականի մեջ հույզերն առաջանում են ոչ միայն կոնկրետ գործողության արդյունքի հետևանքով, այլև այն առիթով, թե ինչ է լինելու ապագայում, որոշ ժամանակ հետո: Նախադպրոցական տարիքում փոխվում և ընդարձակվում են նաև էմոցիոնալ գործընթացների բովանդակությունն ու կազմը: Նրանցում ի հայտ են գալիս հույզեր և զգացմունքներ [4, էջ 45]:

Հատկապես հարկավոր է նշել էմպաթիայի զգացումը /ուրիշին ապրումակցելու, կարեկցելու զգացումը/, առանց որի հնարավոր չէ երեխաների համատեղ գործունեությունն ու շփումը: Վերջինիս ի հայտ գալով է պայմանավորված նաև հեքիաթների ու պատմվածքների, կինոֆիլմերի ու անիմացիոն ֆիլմերի հզոր ներգործիչ ուժը:

Երեխայի ապրումները դառնում են առավել խոր և բարդ, և ինչպես արդեն նշեցինք, ողջ նախադպրոցական տարիքը հուզականորեն երանգավորված է: Ինչ գործունեությամբ էլ երեխան զբաղվի՝ խաղային, արդյունավետ, ուսումնական, այն պետք է հագեցված լինի էմոցիաներով, ունենա հուզական երանգավորում: Հակառակ դեպքում գործունեությունը չի ծավալվի, կիսատ կմնա:

Ավագ նախադպրոցական տարիքում երեխան տիրապետում է նոր և տարբեր գործունեության ձևերի, փոխվում և բարդանում է նրա շփումն այլ մարդկանց հետ, նա ակտիվ ճանաչում է շրջակա աշխարհը և ինքն իրեն: Այդ ամենը ուղեկցվում է երեխայի վառ ապրումներով:

Ավագ նախադպրոցականները շատ բան յուրացնում են հուզակամային ոլորտի միջոցով: Նրանց զարգացման մեջ դժվար է գնահատել հույզերի և զգացմունքների դերը: Չպետք է մոռանալ նաև այն փաստը, որ այս տարիքը հանդիսանում է իբրև սենզիտիվ հուզակամային ոլորտի ձևավորման հատված: Զգացմունքների ձևավորման վրա գլխավոր ազդեցությունը թողնում են կյանքի պայմաններն ու երեխայի դաստիարակությունը:

Առանձնացնում են ավագ նախադպրոցականի հուզակամային ոլորտի զարգացման հիմնական ուղղություններ: Առաջին հերթին բարդանում է դրա բովանդակությունը, հույզերի և զգացմունքների արտահայտիչ կողմը, ձևավորվում է երեխայի հոգեբանական կյանքի հուզական ֆոնը: Երեխան հաջողությամբ կզարգանա այն ժամանակ, երբ նրա մոտ ստեղծվի առույգ, կենսուրախ տրամադրություն: Գուրգուրանքն ու ուշադրությունն են այն գլխավոր աղբյուրները, որոնք սնում և պահպանում են մանկական ուրախությունը [5]: Երեխայի նկատմամբ հոգատար վերաբերմունքը օգնում է նրա մոտ զարգացնել ակտիվություն, վստահություն իր ուժերի նկատմամբ:

Գ.Մ. Բրեսլավը երեխաների հուզակամային ոլորտի խնդիրներին վերագրում է.

1. հուզական կենտրոնացման բացակայություն, երբ երեխան ունակ չէ ապրումներ ունենալու ոչ իրական իրավիճակներում, ոչ էլ գրական ստեղծագործություններ լսելիս,

2. հուզական սինտոնիայի բացակայություն, երբ երեխան ունակ չէ արձագանքելու այլ մարդկանց հուզական վիճակին:
3. հուզական ինքնակառավարման հատուկ ֆենոմենի բացակայություն, երբ երեխան չի ունենում մեղքի զգացում՝ կապված ինքնագիտակցության նոր փուլի (սա ես եմ արել) և հուզականորեն անցյալ վերադառնալու կարողության հետ [2, էջ 6]:

Յու. Մ. Միլանիչը հուզակամային ոլորտի խախտումներով երեխաներին բաժանում են երեք խմբի [3, էջ 15]: Առաջին խմբում այն երեխաներն են, որոնց մոտ արտահայտված են ներանձնային կոնֆլիկտները: Նման երեխաների ծնողների և ուսուցիչների մոտ նկատվում է մտահոգություն, անհիմն վախեր, տրամադրության հաճախակի փոփոխություն:

Երկրորդ խումբը կազմում են միջանձնային կոնֆլիկտներով երեխաները: Այս երեխաներն առանձնացնում են հուզական բարձր գրգռվածությամբ, դյուրագրգռությամբ, ագրեսիվությամբ:

Երրորդ խմբում այն երեխաներն են, ովքեր ունեն թե՛ ներանձնային, թե՛ միջանձնային կոնֆլիկտներ: Նրանց բնորոշ է մի կողմից հուզական անկայունությունը, դյուրագրգռությունը, ագրեսիվությունը, մյուս կողմից՝ նեղացկոտությունը, անհանգստությունը, կասկածամտությունը և վախերը:

Մանկապարտեզը փոխում է նրա հուզակամային ոլորտը՝ կապված գործունեության ընդարձակման և հուզական օբյեկտների թվի շատացմամբ: Այդ տարիքի երեխաներին բնորոշ է բացասական հուզական ֆոնի առկայություն: Ավագ նախադպրոցականների հուզակամային ոլորտը բնութագրվում է.

1. Տեղի ունեցող իրադարձությանը թեթև զգայունությամբ և ընկալման գունավորմամբ, երևակայությամբ, մտավոր և ֆիզիկական գործողություններով, հուզականությամբ:
2. Իրենց ապրումների անմիջականությամբ և բացությամբ, ուրախությամբ, տխրությամբ, վախով, հաճույքով կամ տհաճությամբ:

3. Վախի աֆեկտի պատրաստականությամբ, ուսուցման ընթացքում երեխան վախ է ապրում՝ ինչպես տհաճության, անհաջողությունների, սեփական ուժերի հանդեպ անվստահության նախազգացում:
4. Մեծ հուզական անկայունությամբ, տրամադրության հաճախակի փոփոխությամբ՝ դեպի կարճատև բուռն աֆեկտների հակումով:
5. Ավագ նախադպրոցականներ համար էմոցիոնալ ֆակտոր են հանդիսանում ոչ միայն խաղերը և հասակակիցների հետ շփումը, այլև մեծահասակների ու հասակակիցների՝ այդ հաջողությունների տված գնահատականները:
6. Սեփական և այլոց հուզմունքներն ու զգացմունքները թույլ են ընկալվում և հասկացվում. այլոց դիմախաղը հաճախ սխալ է ընկալվում, ինչպես նաև շրջապատողների զգացմունքները սխալ են մեկնաբանվում, ինչը բերում է այս երեխաների ոչ ադեկվատ պատասխան ռեակցիայի [6, էջ 54]:

Այսպիսով, երեխաների հուզական գործընթացների համար ազդակներ են հանդիսանում անգամ ամենափոքր թվացող երևույթները, որոնց ժամանակին չկանխարգելելը կարող է հանգեցնել առավել լուրջ խնդիրների:

Այն հանգամանքը, որ վաղ տարիքի համեմատ, նախադպրոցական տարիքին հատուկ է հարաբերականորեն հանգիստ հուզական ֆոն, չի նշանակում, որ տարիքային այս փուլում իջնում է երեխայի կյանքի էմոցիոնալ ակտիվությունն ու ինտենսիվությունը: Նախադպրոցականի կյանքն այնքան հարուստ է ու հագեցված էմոցիաներով, որ օրվա վերջում նույնիսկ ուժասպառ է լինում:

Գլուխ.2. Նախադպրոցական հաստատություններում հոգեբանի գործունեության ընդհանուր դրույթները, առանձնահատկությունները

Անհրաժեշտ է նշել, որ կրթական համակարգում, այդ թվում նախադպրոցական հաստատություններում, հոգեբանի աշխատանքի որոշ հիմնարար սկզբունքները և բարոյական էթիկան կարգավորվում են ընդհանուր դրույթների համաձայն, մասնավորապես.

Կրթական (նախադպրոցական) հաստատությունում հոգեբանական ծառայության հիմնական խնդիրները.

1) Երեխաների հետ աշխատանքի ժամանակ նրանց հնարավորությունների իրացում, ամեն տարիքի ունակությունների զարգացում,

2) Երեխաների անհատական առանձնահատկությունների զարգացում. հետաքրքրությունների, ընդունակությունների, հակումների, զգացումների, հարաբերությունների, կյանքի վերաբերյալ պլանների և այլնի,

3) Երեխաների զարգացման համար հոգեբանական բարենպաստ մթնոլորտի ստեղծում (մանկապարտեզում, ինտերնատում, դպրոցում և այլն), որը, նախ և առաջ պահանջում է երեխաների և մեծահասակների, ինչպես նաև տարիքակիցների միջև արդյունավետ շփման կազմակերպում,

4) Ճիշտ ժամանակին հոգեբանական օգնության ցուցաբերում ոչ միայն երեխաներին, այլև նրանց ծնողներին, դաստիարակներին, ուսուցիչներին:

Դրված նպատակին հասնելու համար, իբրև հիմնական միջոց է հանդիսանում հոգեբանա-մանկավարժական բարենպաստ պայմանների ստեղծումը, ինչը թույլ է տալիս լիարժեք կերպով ապրել երեխայի ամեն տարիքային փուլը:

Կրթական (նախադպրոցական) համակարգում, հոգեբանի աշխատանքի հիմքում ընկած է սկզբունքների համապատասխան համակարգ:

1. Անհատական մոտեցման սկզբունքը: Հոգեբանի աշխատանքն ուղղված է անձի անհատական յուրահատկությունները բացահայտելուն, նրա անհատական զարգացման և կարգավորումների միջոցները գտնելուն, վարքում և ուսուցման մեջ

անհատական դժվարությունները և խնդիրները լուծելուն:

2. Երկրորդ կարևոր սկզբունքը՝ հոգեբանի փոխազդեցության սկզբունքն է դաստիարակների և ծնողների հետ: Հոգեբանը հանդիսանում է կոլեկտիվի անդամ և ծնողների հետ միասին հետաքրքրված է ընդհանուր նպատակների նվաճմանը հասնելուն՝ ձևավորել հասարակության լիարժեք անդամ:

3. Երրորդ հիմնարար սկզբունքը՝ դա հետևելն է հոգեբանի իրավունքներին և պարտականություններին, որոնք կարգավորվում են համապատասխան փաստաթղթերով:

Բացի ընդհանուր սկզբունքներից, առանձնացնում են նաև հոգեբանի աշխատանքի կազմակերպման համապատասխան սկզբուքններ:

Կարևոր է հետևել բարոյականության սկզբունքին, ինչը թույլ է տալիս հոգեբանին գտնել ոսկե միջինը՝ բարոյախոսության և բարոյական հարցերը արհամարելու միջև:

Հաջորդ կարևոր սկզբունքը՝ ինքնիրացման սկզբունքն է, զարգացման ներքին ռեսուրսների որոնումը, ինչը թույլ կտա հոգեբանին ակտիվ կերպով հակադրվել ինչպես ներքին պասիվությանը, այնպես էլ աշխատանքում «ինքնաայրմանը»: Կրթական (նախադպրոցական) հաստատությունում հոգեբանական ծառայությունը՝ ամբողջական կրթության համակարգի կարևորագույն մասն է, որը գիտական, կիրառական, գործնական և կազմակերպչական տեսնկյունից ամբողջություն է:

Գիտական տեսանկյունից, այն ենթադրում է կրթական (նախադպրոցական) համակարգում, հիմնավորված գիտական հոգեբանական ծառայության հայեցակարգի ձևավորում: Հարաբերությունների համակարգում, հոգեբանի իրական գործառույթների և դիրքորոշումների դրսևորում, գործնական հոգեբանի աշխատանքի տեխնոլոգիաների և գործիքակազմի մշակման հիմնավորում: Կրթական (նախադպրոցական) հաստատությունում հոգեբանները չեն զբաղվում նոր մեթոդների և ծրագրերի հոգեբանական ծառայության ստեղծմամբ, հոգեկան օրինաչափությունների հետազոտմամբ և այլն: Այդ նյութը մատակարարում է գիտությունը:

Կիրառական տեսանկյունից, այն ենթադրում է կրթական համակարգի ամբողջ աշխատակիցների կողմից հոգեբանական գիտելիքների օգտագործում՝ ինչպես պլանավորման, այնպես էլ իրենց գործունեությունը իրականացնելու ժամանակ: Գործնական ասպեկտը, անմիջականորեն օգտագործվում է գործնական հոգեբանների կողմից մանկապարտեզներում, դպրոցներում և այլ կրթական համակարգի հաստատություններում:

Հոգեբանը պատասխանատվություն է կրում այն բանի համար, որպեսզի մասնագիտորեն վերահսկի մասնակիցների հոգեկան գործընթացի զարգացումը և ապահովի հիմնական հոգեբանական պայմանները, որոնք առավել կերպով նպաստում են այդ զարգացմանը: Ընդհանուր առմամբ, այդ պայմանները կարելի է ներկայացնել հետևյալ կերպ.

1) Տարիքի հետ կապված հնարավորությունների և զարգացման պահուստների առավել ամբողջական իրացում,

2) Ամեն տարիքային փուլում (ուսուցման և դաստիարակման ժամանակ), երեխաների անհատական հատկությունների զարգացում,

3) Բարենպաստ հոգեբանական մթնոլորտի ստեղծում (մանկապարտեզում)՝ հաշվի առնելով մանկական տարիքում շփումների և փոխհարաբերությունների յուրահատկությունները:

Կազմակերպչական ասպեկտը ներառում է կրթությունում հոգեբանական ծառայության գործուն համակարգի ստեղծում: Կրթության հոգեբանական ծառայությունը ստեղծվում է որպես քաղաքի, մարզի, շրջանի միասնական համակարգ, իսկ հեռանկարում՝ նաև ամբողջ երկրի:

Նախադպրոցական ուսումնական հաստատության հոգեբանի պաշտոնային պարտականությունները, որակավորման պահանջները

1. Հոգեբանի պաշտոնային պարտականությունները՝

1) ուսումնական հաստատությունում աշխատանքներ է տանում երեխաների հոգեկան առողջության և անձի զարգացման ապահովման ուղղությամբ.

2) հայտնաբերում է երեխայի անձի կայացումը դժվարացնող պայմանները և հոգեկանխորոշման, հոգեախտորոշման, հոգեշտկման, խորհրդատվության և վերականգնողական միջոցներով օգնում է երեխաներին, մանկավարժներին, ծնողներին, կամ նրանց օրինական ներկայացուցիչներին՝ անձնային, մասնագիտական և այլ կոնկրետ պրոբլեմների լուծման գործում.

3) երեխաների մի տարիքային խմբից մյուսին անցնելիս անցկացնում է սովորելու պատրաստականության հոգեբանամանկավարժական գնահատում, ընտրում կամ առաջարկում՝ անձի զարգացման աստիճանին համապատասխան ուսումնական ծրագրեր.

4) մասնակցում է օժտված երեխաների որոշման, ընտրության և ստեղծագործական զարգացման գործին.

5) բացահայտում է հուզական և մտավոր զարգացման խնդիրներ ունեցող երեխաներին: Հետազոտում և սոցիալ-հոգեբանական օգնություն է ցույց տալիս մտավոր և ֆիզիկական խնդիրներ ունեցող երեխաներին.

6) մասնակցում է հոգեբանամանկավարժական հանձնաժողովի աշխատանքներին, երեխաների սոցիալ-իրավական պաշտպանության հանձնաժողովների աշխատանքին, աջակցում է զբաղվածության տարածքային ծառայություններին.

7) մասնակցում է երեխաների, ծնողների կամ նրանց օրինական ներկայացուցիչների հոգեբանական կուլտուրայի, այդ թվում՝ սեռային դաստիարակության կուլտուրայի ձևավորմանը.

8) ուսումնական հաստատությունների ղեկավարներին և աշխատակիցներին խորհուրդներ է տալիս այդ հաստատության զարգացման, երեխաների մանկավարժների, ծնողների, սոցիալ-հոգեբանական իրազեկության բարձրացման և հոգեբանության գործնական կիրառման ուղղությամբ.

9) մասնակցում է կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների անհատական զարգացման ծրագրերի մշակմանը՝ հաշվի առնելով երեխաների զարգացման առանձնահատկությունները, բացահայտում հուզական, մտավոր զարգացման, վարքային, շփման դժվարություններ ունեցող երեխաներին, նրանց հետ տանում շտկողական, զարգացնող աշխատանքներ. իրականացնում է սաների հոգեկան, մարմնական (սոմատիկ), սոցիալական բարենպաստության ապահովմանն ուղղված մասնագիտական գործունեություն.

10) համագործակցում է երեխայի իրավունքների պաշտպանության հարցերով իրավասու մարմինների հետ.

11) որոշում է երեխաների զարգացման գործին խոչընդոտող գործոնները և ձեռնարկում է տարբեր տեսակի միջոցներ՝ հոգեբանական օգնություն ցուցաբերելու ուղղությամբ.

12) ցուցաբերում է երեխաներին, ծնողներին, մանկավարժական կոլեկտիվին օգնություն՝ կոնկրետ պրոբլեմների լուծման ուղղությամբ: Անցկացնում է տարբեր նշանակության և ուղղվածության հոգեբանական դիտարկում, հետազոտություն, մանկավարժական գնահատում.

13) սաների անհատական և սոցիալական զարգացման ուղղությամբ հետազոտական աշխատանքների նյութերի հիման վրա կազմում է հոգեբանամանկավարժական եզրակացություն՝ մանկավարժական կոլեկտիվի, ծնողների կողմնորոշման նպատակով.

14) սահմանված կարգով վարում է փաստաթղթերը և կիրառում ըստ նշանակության.

15) մասնակցում է երեխաների հետ տարվող կրթադաստիարակչական գործունեության, շտկողական և զարգացման ծրագրերի մշակմանը, նրանց անհատական, սեռատարիքային առանձնահատկությունները հաշվի առնելով.

16) իրականացնում է հոգեբանական աջակցություն՝ օժտված սաների զարգացման ուղղությամբ.

17) որոշում է սաների (մտավոր, ֆիզիկական, հուզական) զարգացման շեղման աստիճանը, ինչպես նաև սոցիալական զարգացման տարբեր բնույթի խանգարումները և անցկացնում է հոգեբանամանկավարժական շտկողական աշխատանքներ.

18) ձևավորում է երեխաների, մանկավարժական աշխատողների, ծնողների հոգեբանական մշակույթը, այդ թվում՝ սեռային դաստիարակությունը.

19) խորհրդատվություն է իրականացնում մանկավարժներին՝ գործնական հոգեբանության կիրառման ուղղությամբ, նպաստում է մանկավարժների, ծնողների սոցիալ-հոգեբանական իրավասությունների մակարդակի բարձրացմանը.

20) իրավասու է՝

ա. ընտրել և կիրառել նախադպրոցական դաստիարակության և ուսուցման ժամանակակից մեթոդներ, ուսումնական ձեռնարկներ և նյութեր.

բ. բարձրացնել մասնագիտական որակավորումը.

գ. մասնակցել հաստատության կառավարման գործընթացին.

դ. պատասխանատու է կրթական ծրագրի իրականացման, ինչպես նաև կրթական գործընթացի ընթացքում երեխաների կյանքի և առողջության պահպանման համար։

2. Նախադպրոցական ուսումնական հաստատության հոգեբանի պաշտոնն զբաղեցնողը պետք է իմանա ստորև նշված նորմատիվ իրավական ակտերի այն դրույթները, որոնք վերաբերում են նախադպրոցական կրթության բնագավառին, կանոնակարգում են պաշտոնի նկարագրով ամրագրված լիազորությունները.

1) «Կրթության մասին» ՀՀ օրենքը, «Նախադպրոցական կրթության մասին» օրենքը, «Երեխայի իրավունքների մասին», «Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց կրթության մասին» ՀՀ օրենքները.

2) երեխաների ուսուցման և դաստիարակության մասին նորմատիվ փաստաթղթերը, օրենսդրության հիմունքները, «Հայաստանի Հանրապետության նախադպրոցական ուսումնական հաստատություն, համայնքային ոչ առևտրային կազմակերպության» օրինակելի կանոնադրությունը, նախադպրոցական կրթական չափորոշիչները և իր պաշտոնային պարտականություններին վերաբերող նախարարության նորմատիվ ակտերը, իրավական այլ փաստաթղթեր.

3) ուսուցման և դաստիարակության մասին նորմատիվ փաստաթղթերը, օրենսդրության հիմունքները, աշխատանքի պաշտպանության, առողջապահության, բնակչության զբաղվածության և նրա սոցիալական պաշտպանության բնագավառներում, ընդհանուր և մանկավարժական հոգեբանություն, ընդհանուր մանկավարժություն, անձի և դիֆերենցիալ հոգեբանություն, տարիքային և մանկան հոգեբանություն, սոցիալական հոգեբանություն, բժշկական հոգեբանություն (մանկան նյարդահոգեբանություն, պաթոհոգեբանություն, պսիխոմատիկա), արատաբանություն, հոգեթերապիա, աշխատանքի հոգեբանություն, հոգեախտորոշման, հոգեբանական և մասնագիտական խորհրդատվության, հոգեպրոֆիլակտիկայի հիմունքները, ակտիվ ուսուցման, շփման, սոցիալ-հոգեբանական, երեխայի բնական և ոչ բնական զարգացման կանխորոշման մեթոդները:

3. Որակավորման պահանջները՝

նախադպրոցական ուսումնական հաստատության հոգեբանի պաշտոնն զբաղեցնողը պետք է ունենա՝

1) բարձրագույն (բակալավր, դիպլոմավորված մասնագետ, մագիստրոս) մասնագիտական կրթություն (սոցիալական մանկավարժություն, սոցիալական աշխատանք մասնագիտությունների և կամ հոգեբանի որակավորմամբ) [7]:

Եզրակացություն

Ամփոփելով աշխատանքը գալիս ենք հետևյալ եզրակացությունների.

1. Նախադպրոցական հաստատություններում աշխատող հոգեբանից պահանջվում են յուրահատուկ գիտելիքներ և կարողություններ, մասնավորապես՝ մանկահասակ տարիքին բնորոշ հուզական ոլորտի առանձնահատկությունների, հոգեկանի զարգացման օրինաչափությունների իմացություն, հոգեկան տարբեր շեղումների վերաբերյալ գիտելիքներ և այլն:
2. Նախադպրոցական հաստատություններում աշխատող հոգեբանը ենթարկվում է այն նույն բարոյական էթիկայի կանոններին, ինչն առկա է ընդհանուր հոգեբանության մեջ:
3. Նախադպրոցական հաստատություններում հոգեբանից պահանջվում է, ինչպես խմբային, այնպես էլ անհատական մոտեցում յուրաքանչյուր երեխայի հետ: Այսպիսի մոտեցումն է, որ թույլ է տալիս առավել արդյունավետ կազմակերպել աշխատանքը և հասնել հնարավոր հաջողությունների:
4. Նախադպրոցական հաստատություններում հոգեբանի աշխատանքը պահանջում է համալիր մոտեցում, դրանում պետք է ներառված լինեն, ինչպես երեխաները, այնպես էլ երեխաների ծնողները, մանկավարժը, դաստիարակը և կոլեկտիվի այլ անդամները:

Գրականության ցանկ

1. Ավանեսյան Հ.Մ. Փորձարարական հոգեբանություն. ուսումնական ձեռնարկ: Հրատ. Էդիթ Պրինտ: Եր. 2010. 288 էջ:

2. Бреслав Г.М., Эмоциональные особенности формирования личности в детстве, Москва : Педагогика, 1990. – 144 с.

3. Миланич, Ю. М. Психологическая коррекция эмоциональных нарушений у детей дошкольного возраста / Ю. М. Миланич..— Л., 1998. 161 с.

4. Мухина В.С., Возрастная психология: феноменология развития, детство, отрочество, 4-е изд., - М., 2000. 452 с.

5. Обухова Л.,Ф., Детская (возрастная) психология, М., РПА, 1996, 374 с.

6. Справочник психолога начальной школы О. Н. Истратова, Т. В. Эксакусто, Издательство: «Феникс» 2011. 448 с.

7. https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=95877 (10.12.2022, 20:29)